



Հակոբ Ահարոնի Հակոբյանը ծնվել է 1985թ. հոկտեմբերի 8-ին Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղում:

2007թ.-ին ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Կառավարման ֆակուլտետը՝ ստանալով տնտեսագետի որակավորում:

2007-2009 թվականներին ծառայել է ՀՀ զինված ուժերում:

2020թ.-ին Chartered Management Institute-ի կողմից ստացել է «Կառավարում և առաջնորդություն» CMI 5-րդ մակարդակի որակավորում:

2025թ.-ին ավարտել է Օքսֆորդի համալսարանի Սայիդ Բիզնես դպրոցը՝ ստանալով դիպլոմ ռազմավարություն և նորարարություն մասնագիտությամբ:

Մասնակցել է Քարտային և վճարային բիզնեսի, վաճառքների կառավարման, SS նախագծերի կառավարման, գեղծարարությունների կառավարման, ադապտիվ առաջնորդության, բանակցությունների, դասընթացավարների պատրաստման և այլ թեմաներով ավելի քան 20 մասնագիտական դասընթացների Հայաստանում և արտերկրում:

Ունի ավելի քան 15 տարվա փորձ բանկային համակարգում՝ մասնագիտանալով վճարային բիզնեսի, վաճառքների կառավարման, բիզնեսի զարգացման և ՓՄՁ ու կորպորատիվ բիզնեսի ոլորտներում:

Իր աշխատանքային գործունեությունը սկսել է 2009թ. նոյեմբերին «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ում՝ որպես վարկային մասնագետ: 2010թ. փետրվարի 1-ից սկսել է աշխատանքը «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում՝ որպես մասնագետ Քարտային կենտրոնի Առևտրի և սպասարկման կետերի ներգրավման բաժնում:

2013թ. հունվարի 1-ից մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ը ղեկավարել է նույն բաժինը որպես բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար, իսկ 2014 թվականի հունվարից նշանակվել է բաժնի պետ:

2015թ.-ին տեղափոխվել է բանկի ՓՄՁ և կորպորատիվ բիզնեսի տնօրինություն՝ որպես ՓՄՁ և կորպորատիվ պրոդուկտների կառավարման և վաճառքների բաժնի գլխավոր մասնագետ, իսկ 2016թ. փետրվարի 1-ից նշանակվել է նույն բաժնի պետ:

2018թ. ապրիլին նշանակվել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի վաճառքների կառավարման բաժնի պետ:

2020թ. ապրիլից զբաղեցրել է «Ակբա բանկ» ԲԲԸ-ի վաճառքների վարչության պետի պաշտոնը:

2025թ. մարտին նշանակվել է «Ակբա բանկ» ԲԲԸ նոր ձևավորված կորպորատիվ բիզնեսի վարչության պետ:

2026թ. մարտից հանդիսանում է «Ակբա բանկ» ԲԲԸ-ի ՓՄՁ և կորպորատիվ բիզնեսի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:

Ամուսնացած է, ունի երկու դուստր: